



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՓԱՍՏԱԲԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Գևորգ Գյոզալյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Կարապետ Աղաջանյանի, Կարեն Մեժլումյանի, Մարտուն Փանոսյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի և Սիմոն Բաբայանի,

քննության առնելով «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (այսուհետ՝ Դպրոց) կառավարման խորհրդի փաստաբան անդամների լիազորությունների դադարեցման և նոր անդամներ նշանակելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց`

Պալատի խորհրդի 01.03.2012թ. թիվ 10/8-Ա որոշմամբ երեք տարի ժամկետով կազմավորվել է Դպրոցի կառավարման խորհուրդ, հետևյալ կազմով՝

1. Ռուբեն Սահակյան, կառավարման խորհրդի նախագահ,
2. Ավետիք Իշխանյան, «Հայաստանի Հելսինկյան կոմիտեի» իրավաբան,
3. Նիկոլայ Հակոբյան, փաստաբան,
4. Գոռ Մարգարյան, փաստաբան,
5. Հերիքնազ Տիգրանյան, փաստաբան,
6. Արամ Օրբեյան, ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ,
ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Դպրոցի կառավարման խորհրդի փաստաբան անդամներից Գոռ Մարգարյանը և Ավետիք Իշխանյանը դիմել են Պալատի խորհրդի նախագահին խնդրելով դադարեցնել իրենց լիազորությունները:

Դպրոցի կանոնադրության 8.5. կետի հիմքով Պալատի նախագահը Պալատի խորհրդին է առաջադրել հետևյալ փաստաբանների թեկնածությունները՝

1. *Լյուդվիկ Դավթյան*, փաստաբան (արտոնագիր թիվ 1416), իրավաբանական գիտությունների թեկնածու,
2. *Լեոնիկ Հովհաննիսյան*, փաստաբան (արտոնագիր թիվ 568):

Դպրոցի կանոնադրության 8.3. կետի համաձայն՝ *Խորհուրդը բաղկացած է վեց անդամից: Խորհուրդը կազմավորվում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահից և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից սույն կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակված չորս անդամից և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության մեկ ներկայացուցչից:*

Դպրոցի կանոնադրության 8.5. կետի համաձայն՝ *Խորհրդի չորս անդամներին նշանակում է ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջադրմամբ՝ երեք տարի ժամկետով: Սույն կետում նշված չորս անդամներից առնվազն երեքը պետք է լինեն ՀՀ փաստաբաններ: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցչի թեկնածությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից:*

Դպրոցի կանոնադրության 8.6. կետը սահմանում է, որ *Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվելու դեպքում այդ անդամի փոխարեն նշանակվում է նոր անդամ սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով:*

Դպրոցի կանոնադրության 8.36. կետի համաձայն՝ *Խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով, սակայն ոչ ուշ, քան Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին Խորհրդի նախագահի իրազեկման օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում:*

Դպրոցի կանոնադրության 8.37. կետի 1-ին ներթափառը սահմանում է, որ *Խորհրդի անդամի լիազորությունները համարվում են դադարած՝ 1) Խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման դիմումը ներկայացնելու հաջորդ օրվանից.....:*

Ելնելով վերոգրյալից,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դպրոցի կառավարման խորհուրդը կազմավորվել է 01.03.2012թ.՝ երեք տարի ժամկետով, մինչև 01.03.2015 թվականը,

ղեկավարվելով Դպրոցի կանոնադրության 8.6, 8.36 և 8.37 կետերի պահանջներով, Պալատի խորհուրդը միաձայն՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. *Դպրոցի կառավարման խորհրդի փաստաբան անդամներ՝ Գոռ Մարգարյանի և Ավետիք Բշխանյանի լիազորությունները համարել դադարեցված:*

2. *Դպրոցի կառավարման խորհրդի փաստաբան անդամներ նշանակել՝ Լյուդվիկ Դավթյանին և Լեոնիկ Հովհաննիսյանին:*

3. *Դպրոցի կառավարման խորհրդի նորանշանակ անդամների լիազորությունների ժամկետը սահմանել մինչև 2015 թվականի մարտի մեկը:*

4. *Սահմանել, որ Դպրոցի կառավարման խորհուրդը կազմված է հետևյալ անդամներից՝*

- 1) Արա Զոհրաբյան, կառավարման խորհրդի նախագահ,
- 2) Նիկոլայ Հակոբյան, փաստաբան,
- 3) Հերիքնազ Տիգրանյան, փաստաբան,
- 4) Լյուդվիկ Դավթյան, փաստաբան,
- 5) Լեոնիկ Հովհաննիսյան, փաստաբան,
- 6) Արամ Օրբելյան, ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

5. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դպրոցի տնօրենին, Դպրոցի կառավարման խորհրդի անդամներին, ինչպես նաև Գոռ Մարգարյանին և Ավետիք Բշխանյանին:

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

25 փետրվարի 2014թ.
թիվ 5/7-Ա
ք.Երևան